ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 14 ապրիլի 2021 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Վաղարշյանի

Անդամակցությամբ՝ Է. Շաթիրյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Ռոբերտ Օրբելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ռոբերտ Օրբելյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի ապրիլի 5-ին)՝ խնդրելով.

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր»:

2. Դիմողի կարծիքով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, որը կարգավորում է հարկադիր աճուրդը չկայացած հայտարարելու և անվավեր ճանաչելու հետ կապված հարաբերությունները, հակասում է Սահմանա-

դրության 61 և 63-րդ հոդվածներին, քանի որ այն չի ապահովում անձի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Դիմողը գտնում է, որ իր կողմից ներկայացված բողոքը վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է բացառապես այն պատճառով, որ գործով առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի փողոց թիվ 96 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդը կամ գրավի և երաշխավորության պայմանագրերը դատարանի վճռով ճանաչված են անվավեր:

Դիմողը նշում է, որ «հակասահմանադրական օրենքի համաձայն՝ ինքը պետք է վիճարկի աճուրդի արդյունքների մասին 11.08.2017 թ. թիվ 02 գոյություն չունեցող արձանագրությունը», սակայն ապացուցված է, որ «թիվ ԵԿԴ/0104/04/16 սնանկության գործում այդպիսի արձանագրություն գոյություն չունի»:

Դիմողի համոզմամբ ստորադաս դատարանը խախտել է նյութական իրավունքի նորմերը, քանի որ հայցը մերժելու համար կիրառել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթը, որը չպետք է կիրառեր, և չի կիրառել Քաղաքացիական օրենսգրքի 304-րդ, 312-րդ, 313-րդ, 467-րդ հոդվածների դրույթները, որոնք պետք է կիրառեր:

3. Դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող իրավական ակտի դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել: Այսպես.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 01.11.2019 թ. կայացնելով դիմողի կողմից ներկայացված՝ գործարքն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասին վճիռ, նշել է, որ Քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածը նախատեսում է օրենքի խախտմամբ կնքված գործարքը, իսկ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ օրենքի խախտմամբ կատարված հարկադիր աճուրդը շահագրգիռ անձի դիմումով՝ դատարանի

կողմից անվավեր ճանաչելու հնարավորություն: Դատարանը նշել է, որ գործով առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի փողոց թիվ 96 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդը կամ գրավի և երաշխավորության պայմանագրերը դատարանի վճռով ճանաչված են անվավեր, իսկ սույն գործով ևս հայցվորի կողմից չի ներկայացվել դրանք վիճարկելու պահանջ:

Իր հերթին, վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, նշել է, որ այն նախատեսում է օրենքի խախտմամբ կատարված հարկադիր աճուրդը շահագրգիռ անձի դիմումով՝ դատարանի կողմից անվավեր ճանաչելու հնարավորությունը, և որ տվյալ դեպքում «Ավտովեգ» ԲԲԸ-ն և Ռոբերտ Օրբելյանը թեև պահանջել են անվավեր ճանաչել 29.08.2017 թ. կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, սակայն ներկայացրել են սնանկության վարույթի շրջանակներում աճուրդի անվավերությանը վերաբերող փաստարկներ: Վերաքննիչ դատարանը նույնպես եկել է այն եզրահանգման, որ գործարքի անվավերության նկատմամբ կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքի իրավադրույթները, այնինչ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը նախատեսում է աճուրդի անվավերության կարգը:

Այսինքն՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի վկայակոչումը թե՛ առաջին ատյանի դատարանի, թե՛ վերաքննիչ դատարանի կողմից նպատակ է հետապնդել ցույց տալ այդ դրույթի կարգավորման առարկան, մասնավորապես այն, որ վիճարկվող նորմով նախատեսվում է աճուրդի անվավերության կարգը, մինչդեռ գործարքի անվավերության նկատմամբ կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքի իրավադրույթները:

Այս պայմաններում դիմողի նկատմամբ դատարանները կիրառել են այլ իրավանորմեր, հետևաբար, առաջին ատյանի դատարանի, այնուհետև՝ վերաքննիչ դատարանի կողմից՝ սույն գործով վիճարկվող «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի վկայակոչումը տվյալ դեպքում չի կարող համարվել կիրառում, քանի որ դիմողի համար չի առաջացրել իրավական հետևանքներ:

Սահմանադրական դատարանը, իր 04.04.2008 թ. ՍԴՈ-747 որոշման մեջ անդրադառնալով օրենքի դրույթի կիրառմանը, արտահայտել է հետևյալ իրավական

դիրքորոշումը. «…. «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «…. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ռոբերտ Օրբելյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Վաղարշյան

Անդամներ՝ Է. Շաթիրյան

Վ. Գրիգորյան

14 ապրիլի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-25